

րեգակն միջօրէի, երանելի կենցաղավարութիւն եւ առաքինաշաւիղ ընթացիւք, պատճառ բարեաց բազմաց լինելով, ուղղութիւն կարգաց, շինութեան եկեղեցեաց եւ այլ նմաբարեհաւանութեանց: Ուստի եւ նոր նորոգեալ պայծառացոյց գտիեղերական աթոռս. թէպէտ եւ ոչ սկիզբն, սակայն ըզ: վաղճանն գեղեցկապի յանգեաց, ըստ որում Դաւթին առաջարկութիւն եւ Սողոմոնեան եղբակացութիւն տեսանի: Վասն զի յառաջ քան զսա սրբազան եւ երջանիկ հայրապետն Մովսէս, որ էր ի սիսական նահանգէ, անհամեմատ գտեալն նմիւ արդիս, զոր ոչ ոք կարացէ ըստ քանիտնութեան նորա արտաքիպիլ եւ զլիճ քեզ. կաշկիւր նպատակ զպարթեան Սահակ կամ զմեծն Ներսէս, ըստ բնութեան բարուցն, ըստ մաքրութեան կենացն, ըստ ուղղութեան ընթացիցն, ըստ առաւելութեան արդեանցն ի վրա ազգիս եւ ըստ այլոց նմի: Սա երիցս չոքաւ առ թաղաւորն Պարսից եւ յոյս սիրեցաւ ի նմանէ, որով եւ ազատեաց զաթոռս մեծ եւ զիմասական հարկաց ծայրագունից, որ յանուղղագործ առաջնորդաց ազգիս մտեալ | էր սա ի ներքոյ չարագոյն լծոյն այնորիկ. խափեալ եբարձ զայն երջանիկս դէտ շնորհօքն քի: Եւ զկնի այնորիկ սկիզբն արար ի մաքրել զսա յաղբեւից բազմակուտից, լայնանիստ պարսպօք բոլորեաց եւ զերից կողմանց շինուածն աւարտեաց, որ ինչ միանգամ ըստ Հ' րկութեան եւ ըստ պատշաճաւորեա . . պիտոյանայր, քարիւ եւ կրով կարծակառոյց ամբողջ: Նաեւ զկմբէթ մեծի տաճարիս ի բաց առեալ շքեղացոյց. քանզի էր խարխալեալ եւ կարի նիստ: Եւ յետ այնորիկ եղեւ զրաւ կենաց իւրոց՝ փոխեցաւ աստուտ յանմահական կաանսն ի հազարերորդ ութսներորդ երկրորդ թուոյս մերոյ, գոլով վաթսուն ամաց. կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորս եւ ամիսս ըստ ամացն:

Իսկ զկնի երանելւոյն փոխանորդեաց աշակերտ նորին Տէր Փիլիպպոս գիտապետն, զորմէ նախաճառեցաք: Եւ նա լը: ցոյց զթերին, քանզի գտանիս սք աթոռոյս պայծառապէս նորոգեաց մինչեւ ի գօտին, եւ զբրբունսն եռակիր զգրունսն երից կողմանց եւ զաստիճանսն չուրջանակի եւ զարեւելեան ձեռակերտսն եւ զայլ նմա շինուածն ըստ պիտոյից սորա: Յորոյ աւուրս ընդ շինութեան մեծի աթոռոյս՝ նորոգեցան պայծա-

ռապէս եւ եկեղեցիք սրբոյն Հովսիմէի եւ սրբոյն Գայիանեայ հանդերձ յայտնութիւն պատուական նշխարաց իւրեանց: Ընդ որոյ հովանեաւ եւ մեք («ը» — Գրէ Գրէ) յոքունս բարեոք տնօրինեալ խնամիմք եւ տաժիմք: Զոր շնորհեսցէ մեզ նոր նմ խորագոյն խաղաղութիւն եւ յաւէտ իմն յարամնալցական ամօք կալ մնալ բարի հովիւ ի ՌՀԹ պատճառս սը: փոփոխ վարատեալ ազանց մեր:

Եւ արդ գրեցաւ իմաստասիրական գիծս յամի հազարերորդի ինսներորդի հինգերորդի թուականութեան արամազեանս տոհմի. առ հովանեաւ հոյակապ մեծի աթոռոյս Ստաթէի յաշխարհիս Սիւնեաց, ձեռամբ Մկրտչի միանձնական եւ սրբակրօն քահանայի, երկրաւ Լեհացի, որ անուանի Սարմատիա: Բայց զթուղթ յայտրիկ գրոց շնորհեաց տէր իմ եւ խնամօղ ըստ նմ պիտոյից ի մանկական տիոց մինչեւ ցայս վայր, սրբազն, բարունապետն Յակովբ, որ է փոխանորդ նն Փիլիպպոսի երջանիկ հայրապետի. եւ ի բոլոր անձնէ եւ արիական սրտիւ գօտեւորել ճգնօղ ի վերայ նմ գործառնութեան նորին. իսկ եւ զտաճար սրբոյն Ստեփանոսի նախապկային, որ ի ձորն Շամբի անուանեալ շքեղազ"րդ յօրինուածով կառոյց, զորոյ կեանս պարսպեցէ նոր եւ պարգեւեսցէ ընդ երկայն աւուրս լինել ի գովեստ փառաց անուան իւրոյ, զոր յիշել ազաչեմ յաղօթըս երկնանուէրս:

Այլ եւ գրողի զսկզբնագիր բանից գլխոց կարմրադեղով տեառն Ստեփանոսի հոգիւ ընկլ քահանայի եւ իմաստից պարագողի, համազաւառաւ գրոցս գծողի: Եւ ոսկէնկար ծաղկափթիթ որակաւք պաճուճողի՝ Սիմէօնի վարդապետի ի քն հանգուցելոյ մասն բարեաց ձերովք մաղթանօք շնորհեսցի: Իսկ եւ աւանդողի գաղափարի սորին այսորիկ գրոյս՝ Մովսէսի քաջ բարունոյ մակացութեց յարալ հետեւողի, յորոյ աշխատասիրութենէ ստուգաբանեցաւ ըստ քերթողական արհեստի եւ ճշգրիտ իմացուածով օրինակ գրոյս, ուստի եւ ածանցեցաւ. ընդ որոյ հատուցումն ըստ վաստակոց նոր տացի յամենառատ գթութեան անտի նյ: Նաեւ հարազատական գը: թով սիրեցեալ եղբօրս մերոյ տէր Պօղոսի, որ աշխատակից եղեալ ի սրբագրութի տառիցս, փոխարինութի յանպատում բարեացն եղիցի հանդերձ համօ-

ՌՀԸ

ՌՀԹ

ՌԶ